ՆԱԽԱԳԻԾ 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----------2011 թվականի N-----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. <<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1748-Ն որոշման թիվ 5, 10 և 11 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. 2011 թվականի առաջին եռամսյակում (աճողական՝ առաջին կիսամյակ, ինն ամիս) Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը հատկացնել

36000.0 հազար դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածով)՝ <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի շենքում տեղակայված Հայաստանում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների հայ-հնդկական ուսումնական կենտրոնի տարածքի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
---------- N ---------- որոշման

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748- Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
1	2	3	4	5	6	7	8
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	0.0	0.0	0.0	0.0
			այդ թվում				
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	(36000.0)	(36000.0)	(36000.0)	(36000.0)
			այդ թվում				
	06		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	(36000.0)	(36000.0)	(36000.0)	(36000.0)
			այդ թվում				
		01	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	(36000.0)	(36000.0)	(36000.0)	(36000.0)
			17. Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ	(36000.0)	(36000.0)	(36000.0)	(36000.0)
			ՀՀ կրթության և գիտության նախարարություն	(36000.0)	(36000.0)	(36000.0)	(36000.0)
			այդ թվում				
			Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով	(36000.0)	(36000.0)	(36000.0)	(36000.0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	36000.0	36000.0	36000.0	36000.0
			այդ թվում				
	01		ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	36000.0	36000.0	36000.0	36000.0
			այդ թվում				
		01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	36000.0	36000.0	36000.0	36000.0
			01.ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	36000.0	36000.0	36000.0	36000.0
			ՀՀ կառավարություն	36000.0	36000.0	36000.0	36000.0

Ա. Աշոտյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
---------- N ---------- որոշման

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1748-Ն որոշման N 10 հավելվածի լրացումներ

Գնման առարկայի					Գումարը (հազար դրամով) /ավելացումները նշված են դրական նշանով/
Անվանումը			Չափման միավորը	Քանակը	Գնման ձևը	
1			2	3	4	7
ՀՀ կրթության և գիտության նախարարություն						36000.0
Բաժին N 11	Խումբ N 01	Դաս N 01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ			36000.0
<<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի շենքում տեղակայված Հայաստանում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների հայ-հնդկական ուսումնական կենտրոնի տարածքի վերանորոգման աշխատանքների իրականացում						36000.0
ՄԱՍ III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						36000.0
Բնակելի և ոչ բնակելի շենքերի հիմնական նորոգում			դրամ	1	Բաց ընթացակարգ	36000.0

Ա. Աշոտյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
---------- N -------- որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Չափորոշիչներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի

ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները

1. Քաղաքականության միջոցառումներ

1.1 Ծառայություններ

Ծրագրային դասիչը		*Անվանումը՝*								
Ը003	ԱԾ01	Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ								
		Նկարագրություն *Հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկում և համակարգչային սարքավորումների պահպանում*								
Քանակական		Դպրոցների թիվը				(256.0)				
Որակական		Մշակված չէ								
Ժամկետայնության		Մշակված չէ								
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			x	x	x	x	(36000.0)	(36000.0)	(36000.0)	(36000.0)
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը Ը003 Հանրակրթության օժանդակության ծառայություններ										
Վերջնական արդյունքի նկարագրությունը Հանրակրթական ուսուցման որակի, մատչելիության և տնտեսության արդի պահանջներին համապատասխանության բարելավում										
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը <<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին>> ՊՈԱԿ										

Ա. Աշոտյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

<<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրված Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հայ-հնդկական ուսումնական կենտրոն հիմնելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

2009թ. հուլիսի 26-ին **փոխըմբռնման հուշագիր** է ստորագրվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև՝ Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հայ-հնդկական ուսումնական կենտրոն հիմնելու վերաբերյալ: 2009թ. նոյեմբերի 16-ին հուշագիրը սահմանված կարգով վավերացվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից:

Համաձայն Հուշագրի՝ **Հնդկաստանի Հանրապետության կառավարությունը** Կենտրոնի համար տրամադրում է համակարգչային և ցանցային սարքավորումներ,

ուսումնական նյութեր, կազմակերպում հայ դասախոսների վերապատրաստում Հնդկաստանում և հնդիկ մասնագետների այցելություն Հայաստան, աջակցում համատեղ հետազոտական ծրագրերի և այլ միջոցառումների իրականացմանը՝ 2 մլն. ամերիկյան դոլար ընդհանուր արժեքով:

Հուշագրի 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ ՀՀ կառավարությունը ստանձնել է նաև հայ-հնդկական ՏՀՏ կենտրոնին հատկացնել շենք՝ ներքին հարդարանքով և կահավորանքով: Նկատի ունենալով, որ հնդկական կողմն արդեն սկսել է հուշագրով իր ստանձնած պարտավորությունների կատարումը, մասնավորապես՝ կենտրոնում ուսումնական պրոցեսի համար անհրաժեշտ գրականությունն արդեն Հայաստանում է, իսկ սարքավորումները շուտով կուղարկվեն Հայաստան, անհրաժեշտ է արագացնել կենտրոնի կարիքների համար հատկացված տարածքի (ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի տարածքի մի մասի) վերանորոգման և կահավորման աշխատանքները:

Շինարարական - վերանորոգման աշխատանքների նախահաշիվը կազմվել է նկատի ունենալով կենտրոնի տարածքի նախագծով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Միաժամանակ հարկ է նշել, որ մինչ օրս Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝

- 2009թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Հնդկաստանի պատվիրակության առաջին այցը Հայաստան, որի շրջանակում քննարկվել և ամփոփվել են ծրագրի մանրամասները,

- իրականացվել է ծրագրի շահառուների սեմինար-խորհրդատվություն հայ և հնդիկ մասնագետների մասնակցությամբ,

- հնդկական գործընկերների հետ համատեղ ընտրվել է կենտրոնի տարածքը՝ Երևանի պետական համալսարանում, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մասնաշենքում,

- ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին մշակվել է կենտրոնի շինարարական աշխատանքների նախագիծը (ընդհանուրը 4.000.000 (չորս միլիոն) ՀՀ դրամ արժեքով),

- հնդիկ գործընկերների կողմից հայտարարվել և ամփոփվել են կենտրոնի ուսումնական նյութերի, համակարգչային սարքավորումների և ցանցի տեղադրման մրցույթները, ուսումնական նյութերն արդեն ներմուծվել են Հայաստան,

- իրականացվում է Կենտրոնի դասախոսական անձնակազմի վերապատրաստումը Հնդկաստանում (առաջին խումբն (երեք հոգի) արդեն վերադարձել է, իսկ երկրորդ խումբը (հինգ հոգի) ներկայումս գտնվում է Հնդկաստանում):

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Կենտրոնի ստեղծման հիմնական **նպատակն է** իրականացնել համատեղ կրթական և գիտահետազոտական ծրագրեր, պատրաստել համաշխարհային մակարդակի բարձրակարգ ՏՀՏ մասնագետներ՝ հայկական շուկայում ներդրումներ ներգրավելու և արտահանումների միջոցով շուկայի հասույթը մեծացնելու նպատակով, ձևավորել գիտական աշխատողների համատեղ թիմեր, կազմակերպել մասնագետների և հետազոտողների փոխանակման ծրագրեր:

Նման միջազգային մակարդակի կրթական հաստատության առկայությունը Հայաստանում եզակի հնարավորություն է ստեղծում ՏՀՏ ոլորտի, և հատկապես ԵՊՀ-ի գիտադասախոսական անձնակազմի և ուսանողների համար՝ առաջադեմ տեխնոլոգիաներին ծանոթանալու, նորագույն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու և փորձի փոխանակման համար: Կենտրոնի արդյունավետ գործունեությունը մեծապես կնպաստի նաև Հայաստանի դիրքավորմանը որպես տարածաշրջանի ՏՀՏ գիտա-հետազոտական և կրթական առաջատար կենտրոն:

Կարգավորման նպատակը և բնույթը.

Հուշագրով ՀՀ կառավարությունը ստանձնել է հայ–հնդկական ՏՀՏ կենտրոնին հատկացնել շենք՝ ներքին հարդարանքով և կահավորանքով: Նկատի ունենալով, որ հնդկական կողմն արդեն սկսել է հուշագրով իր ստանձնած պարտավորությունների կատարումը, անհրաժեշտ է արագացնել կենտրոնի կարիքների համար հատկացված տարածքի (ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի տարածքի մի մասի) վերանորոգման և կահավորման աշխատանքները: Այդ նպատակով կազմվել է շինարարական - վերանորոգման աշխատանքների նախահաշիվը, և ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 09.06.01.<<17. Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ>> ծրագրի միջոցներից 36000.0 հազար դրամը (2011 թվականի չորրորդ եռամսյակում նախատեսված էր 256 նոր դպրոցների ենթացանցի սպասարկման աշխատանքների կատարումը տեղափոխել

<<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ-ից Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, սակայն դա կիրականացվի 2012 թվականին) տրամադրել Կենտրոնին հատկացված տարածքը վերանորոգելու նպատակով:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

ՀՀ ֆինանսների, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների աշխատակիցները:

Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը.

Իրավական ակտի կիրարկման դեպքում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը 2011 թվականի առաջին եռամսյակում հատկացնել 36000.0 հազար դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով: Նշված գումարը կտրամադրվի Հուշագրով Հայաստանի Հանրապետության կառավարության անունից «Հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնի» տարածքի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով: Արդյունքում կունենանք վերանորոգված և կահավորված տարածք, որտեղ Հնդկաստանից ժամանող մասնագետների կողմից կիրականացվի ցանցի և սարքավորումների տեղադրում, այնուհետև կապահովվի դասավանդման պրոցեսի սկիզբը:

Սույն որոշման նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքը և 2009թ. հուլիսի 26-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրված Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հայ-հնդկական ուսումնական կենտրոն հիմնելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը: